ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է մահացել Դավիթ բեկը.**

1) 1729 թ.
2) 1730 թ.
3) 1727 թ.
4) 1728 թ.

2 **Ե՞րբ է կազմավորվել Արարատյան գունդը.**

1) 1916 թ. փետրվարին
2) 1916 թ. մայիսին
3) 1915 թ. հունիսին
4) 1915 թ. ապրիլին

3 **Հնչակյան կուսակցությունը ԽՍՀՄ տարածքում ե՞րբ դադարեցրեց իր գործունեությունը.**

1) 1923 թ.
2) 1924 թ.
3) 1921 թ.
4) 1922 թ.

4 **Ե՞րբ է ԼՂ Ազգային խորհրդի անդամների և Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունել «Հայկական ԽՍՀ–ի և ԼՂ վերամիավորման մասին» որոշումը.**

1) 1988 թ. դեկտեմբերի 1–ին
2) 1990 թ. մայիսի 20–ին
3) 1989 թ. դեկտեմբերի 1–ին
4) 1991 թ. սեպտեմբերի 21–ին

5 **Ե՞րբ է գահակալել Արգիշտի I–ը.**

1) Ք. ա. մոտ 810–786 թթ.
2) Ք. ա. 786–781 թթ.
3) Ք. ա. 786–764 թթ.
4) Ք. ա. 764–735 թթ.

6 **Ե՞րբ է Տրդատ I–ը կառուցել Գառնիի ամրոցը.**

1) 76 թ.
2) 86 թ.
3) 72 թ.
4) 75 թ.

7 **Ե՞րբ է տեղի ունեցել Դողսի ճակատամարտը.**

1) 904 թ.
2) 892 թ.
3) 890 թ.
4) 894 թ.

8 **Ե՞րբ է Միսը դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք.**

1) 1173 թ.
2) 1175 թ.
3) 1151 թ.
4) 1169 թ.

9 **Թվարկվածներից ո՞վ հայագետ չէ.**

1) Հ. Աճառյանը
2) Գ. Ղափանցյանը
3) Լ. Օրբելին
4) Մ. Աբեղյանը

10 **Թվարկվածներից ո՞ր գավառը չէր մտնում 1849 թ. ստեղծված Երևանի նահանգի մեջ.**

1) Նոր Բայազետի
2) Երևանի
3) Օրդուբադի
4) Նոր Նախիջևանի

11 **Ո՞վ էր 1918 թ. սեպտեմբերին կազմավորված հայկական դիվիզիայի հրամանատարը.**

1) Թ. Նազարբեկյան
2) Հ. Բագրատունի
3) Մ. Սիլիկյան
4) Ա. Շահմազյան

12 **Արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ նախագահ ընտրվեց՝**

1) Ռոբերտ Քոչարյանը
2) Սերժ Սարգսյանը
3) Կարեն Դեմիրճյանը
4) Լևոն Տեր–Պետրոսյանը

13 **Ովքե՞ր են Նոյի որդիները.**

1) Արմենոսը, Թորգոմը և Հայկը
2) Թորգոմը, Սեմը, Հաբեթը
3) Քամը, Բելը, Հայոսը
4) Հաբեթը, Քամը, Սեմը

14 **Որտե՞ղ էր «70 հովիտներ» կոչվող տարածքը.**

1) Ծոփքի հյուսիս–արևելքում
2) Մեծ Հայքի հարավ–արևելքում
3) Մեծ Հայքի հյուսիս–արևմուտքում
4) Փոքր Հայքի արևելքում

15 **Ո՞ր կարևոր փաստաթղթով էր սահմանվում յուրաքանչյուր նախարարի տեղն Արշակունյաց արքունիքում.**

1) Գահնամակ
2) Զորանամակ
3) Գահացուցակ
4) Հրովարտակ

16 **Ո՞ր գավառներն էր Վասպուրականից անջատել և իր թագավորությանը միացրել Գագիկ I–ը.**

1) Կոգովիտ և Բագրևանդ
2) Կոգովիտ և Ծաղկոտն
3) Կոգովիտ և Նախճավան
4) Արտազ և Ծաղկոտն

17 **Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հրապարակվել հետևյալ կոչը.**

«Յո՛ւյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

1) Սասունի 1904 թ. իրադարձությունների
2) հայ–թաթարական ընդհարումների
3) Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման
4) արևմտահայության կոտորածների

18 **Ո՞ր ճակատամարտի մասին են հետևյալ խոսքերը.**

«Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:

Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

1) Արածանիի
2) Տիգրանակերտի
3) Խառանի
4) Հռանդեայի

19 **Ի՞նչ է կոչվում պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող–հուշարձանը.**

1) վիշապաքար
2) սահմանաքար
3) խաչքար
4) մենհիր

20 **Ինչպե՞ս է կոչվում այն լեզվաընտանիքը, որին պատկանում է հայերենը.**

1) հնդեվրոպական
2) սեմական
3) ասիական
4) եվրոպական

21 **Թվարկվածներից ո՞րը Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության ընդհատման պատճառներից չէր.**

1) խորհրդային երկրի տնտեսական դժվարությունները
2) ԽՍՀՄ–ի ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
3) սառը պատերազմի իրողությունը
4) խորհրդա–թուրքական բարեկամական հարաբերությունների սերտացումը

22 **Ո՞րն էր Անին բյուզանդացիներին հանձնելու պատճառը.**

1) Հայ իշխանները միացան բյուզանդական բանակին և սատարեցին թշնամիներին:
2) Բնակչությունը չհամախմբվեց սպարապետի շուրջը և չցանկացավ կռվել ոսոխի դեմ:
3) Պետրոս Գետադարձ կաթողիկոսը համաձայնեց բյուզանդացիների՝ քաղկեդոնականություն ընդունելու առաջարկի հետ և միացավ թշնամուն:
4) Արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը, թուլացել էր բնակչության դիմադրական կորովը:

23 **1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սան Ստեֆանոյի հաշտության կնքումը
բ. Լոնդոնում ռուս–անգլիական համաձայնագրի կնքումը
գ. Դիադինի գրավումը Երևանյան ջոկատի կողմից
դ. Բեռլինի վեհաժողովի սկիզբը
ե. Կարսի գրավումը Հ. Լազարևի զորամասի կողմից

1) գ, բ, դ, ե, ա
2) գ, ե, ա, բ, դ
3) ա, բ, դ, ե, գ
4) բ, գ, դ, ա, ե

24 **Գտնել այն իրադարձությունը, որն, ըստ ժամանակագրական հաջորդականության, տեղի է ունեցել վերջինը.**

1) Արևմտահայերի երկրորդ համագումարը
2) ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովը
3) Պողոս Նուբարի նախաձեռնությամբ Փարիզում Հայոց ազգային համագումարը
4) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական առաջին ընտրությունները

25 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն

1) Կարապետ Սիմոնյան
2) Սիմոն Զաքյան
3) Նելսոն Ստեփանյան
4) Գևորգ Վարդանյան
5) Նվեր Սաֆարյան

Փաստ

ա. հայկական 89–րդ դիվիզիայի հրամանատարը 1943 թ. փետրվարից
բ. ԽՍՀՄ կրկնակի հերոս
գ. Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
դ. հայկական 390–րդ դիվիզիայի հրամանատար
ե. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
զ. ԽՍՀՄ հերոս, լեգենդար հետախույզ

1) 1–զ, 2–գ, 3–դ, 4–բ, 5–ա
2) 1–զ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–բ
3) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5–բ
4) 1–զ, 2–դ, 3–բ, 4–զ, 5–ա

26 **Արքաների անունները համապատասխանեցնել իրենց արքայատոհմերին.**

1) Խոսրով Կոտակ
2) Արտավազդ II
3) Աշոտ Ողորմած
4) Լևոն III

ա. Երվանդունի
բ. Արշակունի
գ. Հեթումյան
դ. Արտաշիսյան
ե. Բագրատունի

1) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–գ, 2–ե, 3–ա, 4–դ
3) 1–բ, 2–դ, 3–ե, 4–գ
4) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ

27 **Տրված շարքերից ո՞րն է ներկայացնում միայն ՀՀ վարչապետների.**

1) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Ավետիք Սահակյան, Վահան Փափազյան
2) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Տիգրան Սարգսյան
3) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Խաչատուր Կարճիկյան
4) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, Սերժ Սարգսյան

28 **Ո՞րն է Բուն Հայոց թվականի սկիզբը.**

1) Ք. ա. 2492 թ.
2) Ք. ա. 552 թ.
3) Ք. ա. 331 թ.
4) Ք. հ. 1 թ.

29 **Ե՞րբ է տեղի ունեցել Սարդարապատի հերոսամարտը.**

1) 1918 թ. մայիսի 23–29–ը
2) 1918 թ. մայիսի 25–30–ը
3) 1918 թ. մայիսի 16–27–ը
4) 1918 թ. մայիսի 22–28–ը

30 **1935 թ. հայկական ո՞ր ֆիլմը բարձրացավ էկրան.**

1) «Նամուս»
2) «Պեպո»
3) «Զարե»
4) «Գիքոր»

31 **2 թ. հակահռոմեական ապստամբության ժամանակ ո՞վ էր Արտագերսի բերդապահը.**

1) Տրայանոսը
2) Ադդոնը
3) Մանկայոսը
4) Մենոնը

32 **Ո՞ր իրադարձության հետ կապված է ասվել հետևյալ տեսակետը.**

Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում «հրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողատարածքները, և՛ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները»:

1) Սևրի պայմանագրի կնքման
2) ԽՍՀՄ–ի կազմավորման
3) ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսի
4) Բաթումի պայմանագրի կնքման

33 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Ո՞ւր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»:

1) Եզնիկ Կողբացի
2) Եղիշե
3) Պարույր Հայկազն
4) Դավիթ Անհաղթ

34 **Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու 36 կետերից բաղկացած ծրագիրը կոչվում էր՝**

1) Մոսկովյան
2) Պֆալցյան
3) Գերմանական
4) Դյուսելդորֆյան

35 **Ի՞նչ նպատակով է անգլիական «Արևելահնդկական» ընկերությունը պայմանագիր կնքել հայ վաճառականների հետ.**

1) գերշահույթ ստանալու և գործն ընդլայնելու
2) հնդիկ առևտրականներին մրցակցությունից դուրս մղելու
3) Հնդկաստան մուտք գործելը դյուրացնելու և հայ վաճառականության մրցակցությունից խուսափելու
4) Հայոց պետականության վերականգնմանը խանգարելու

36 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խոսրով I–ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ
բ. Սասանյան արքայատոհմի հաստատումը պարսից գահին
գ. հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում
դ. հայոց գահի բռնազավթումը Որմիզդ–Արտաշիրի կողմից

1) գ, ա, դ, բ
2) գ, ա, բ, դ
3) գ, բ, ա, դ
4) ա, գ, բ, դ

37 **Լուսավորչի տոհմին պատկանող կաթողիկոսներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ներսես Մեծ
բ. Հուսիկ
գ. Վրթանես
դ. Արիստակես

1) դ, գ, բ, ա
2) գ, դ, բ, ա
3) գ, դ, ա, բ
4) դ, գ, ա, բ

38 **Արտաշես I–ի՝ Մեծ Հայքին միացրած տարածքները համապատասխանեցնել ուղղությանը.**

1) արևելք	ա. Կարնո երկիր, Եկեղիք, Դերջան
2) հարավ	բ. Գուգարք
3) հյուսիս	գ. Ծոփք, Կոմմագենե
4) արևմուտք	դ. Փայտակարան, Կասպեից երկիր
	ե. Տմորիք

1) 1–գ, 2–բ, 3–ե, 4–դ
2) 1–ա, 2–ե, 3–բ, 4–դ
3) 1–դ, 2–ե, 3–բ, 4–ա
4) 1–դ, 2–բ, 3–ե, 4–գ

39 **Ի՞նչ անուններով էր հայտնի 1916 թ. հոկտեմբերի վերջին Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ՝ հիմնականում հայ կամավորականներից ստեղծված զորամիավորը.**

1) Արևելյան լեգեոն
2) Պաղեստինյան լեգեոն
3) Հայկական հարվածային գունդ
4) Հայկական գումարտակ
5) Հայկական լեգեոն

40 **Ինչո՞ւ էր Տիգրան Մեծի համար օրակարգի հարց դարձել նոր մայրաքաղաքի կառուցումը.**

1) Նոր մայրաքաղաք կառուցելով՝ Տիգրանը ցանկանում էր դաշնակից ձեռք բերել անհնազանդ ավագանու դեմ պայքարում:
2) Արտաշատը մնացել էր տերության ծայր հյուսիսում և այլևս չէր կարող մայրաքաղաքի դեր կատարել:
3) Գերեվարված քաղաքային բնակչությունը այլևս հնարավոր չէր տեղավորել հին քաղաքներում, ուստի անհրաժեշտ էր ստեղծել խոշոր մի քաղաք:
4) Անտիոքը չէր կարող Հայկական տերության մայրաքաղաք դիտվել, քանի որ հայկական տարածքներից դուրս էր և ուներ գերազանցապես օտար բնակչություն:
5) Հետևելով հին հայկական ավանդույթին՝ Տիգրանը պետք է մայրաքաղաք կառուցեր այն վայրում, որտեղ նա թագադրվել էր:

41 **Ընտրել սխալ պնդումները.**

1) Աղաբաբյան դպրոցը հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերել Խաչատուր Աբովյանի տեսուչ եղած ժամանակ:
2) XIX դ. առաջին կեսին տարրական, հոգևոր–ծխական դպրոցների կողքին ստեղծվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:
3) Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Օսմանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը:
4) Զաքարիա Քանաքեռցու, Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի պատմագիտական աշխատություններում լուսաբանվում են ոչ միայն բուն Հայաստանի, այլև Օսմանյան կայսրությունում և Պարսկաստանում տեղի ունեցած իրադարձությունները:
5) Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, ինչպես Խորենացու «Հայոց պատմությունը», ամբողջական պատկերացում է տալիս հայ ժողովրդի անցած ուղու մասին:

42 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը.**

1) ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը
2) ԱԽՍՀԴՄ–ի ստեղծումը
3) ԱԽԴՍՀ–ի ստեղծումը
4) Վ. Լենինի նամակ–հրահանգը Անդրկովկասի «կոմունիստ ընկերներին»
5) ԽՍՀՄ կազմավորումը
6) Անդրկովկասի խորհրդային դաշնության լուծարումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Կորդուքի միացումը Մեծ Հայքին
2) հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
3) Տիգրան II–ի բանակների մուտքը Ասորիք
4) Պարթևստանի Գոդերձ II–ի գահ բարձրանալը
5) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա

44 **Հայ ազգային գործիչների անունները համապատասխանեցնել նրանց մականուններին.**

ա. Գարուն Աղասի
բ. Իշխան
գ. Պետո
դ. Մարտիկ
ե. Վարդան

ա	
բ	
գ	
դ	
ե	

1) Սերոբ Վարդանյան
2) Հովսեփ Արղության
3) Ալեքսանդր Պետրոսյան
4) Կարապետ Թուր–Սարգսյան
5) Մարտիրոս Սարուխանյան
6) Սարգիս Մեհրաբյան

45 **Մլեհի գործունեության վերաբերյալ ստորև տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Նրա վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին Կիլիկիայի հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը:
2) Հարևան մահմեդական երկրների և Բյուզանդիայի հետ գործակցելու քայլերից դժգոհ հայ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին նրան:
3) Խաչակիրներից ազատագրել է Ադանա, Մսիս և Տարսոն քաղաքները:
4) Բարեկարգելով Սիս քաղաքը՝ այն դարձրել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
5) Նրա իշխանության տարիներին Դաշտային Կիլիկիան կրկին խաչակիրների տիրապետության տակ էր. միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին Բյուզանդիային:
6) Նա դաշնակցել է Դամասկոսի ամիրայի հետ:

Բ մակարդակ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում Հայոց արքան հայտնի էր «տիեզերքի թագավոր» տիտղոսով:
բ. Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում տարածված կրոնը միաստվածային էր:
գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
դ. Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
ե. Արգիշտի I–ն իր տերությանն է միացրել Էթիունյան միության մաս կազմող Վեդուրի–Էթիունի կամ այլ կերպ՝ Ջրային Էթիունի երկրամասը:
զ. Հույներն ու հռոմեացիները Տիգրան Մեծին բնորոշել են որպես «կենցաղավարության մեջ զուսպ, նաև չափավոր ու ողջամիտ, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
է. Արգիշտի I–ը իր տերությանն է միացրել նաև Աբիլիանի երկիրը, որը հետագայի Ապահունիք գավառն է:

1) գ, դ, ե
2) բ, գ, է
3) ա, դ, է
4) բ, ե, զ

47 **Արշակունյաց արքունի գործակալին համապատասխանեցնել իր գործառույթներին.**

1) արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը
2) Մեծ Հայքի զինված ուժերի գլխավոր հրամանատարը
3) արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունի սեպուհների դաստիարակությունը իրականացնողը
4) հանրային աշխատանքները, պետական պարհակներն ու հարկահանության գործը տնօրինողը
5) պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար պատասխանատուն
6) ընդունված օրենքների գործադրումը հատկապես ընտանեկան և եկեղեցու իրավունքի բնագավառում վերահսկողը

ա. մաղխազ
բ. սենեկապետ
գ. հայր մարդպետ
դ. հազարապետ
ե. թագադիր և թագակապ ասպետ
զ. սպարապետ
է. մեծ դատավոր

1) 1–բ, 2–զ, 3–ա, 4–դ, 5–է, 6–ե
2) 1–ա, 2–զ, 3–գ, 4–բ, 5–ե, 6–է
3) 1–է, 2–զ, 3–գ, 4–դ, 5–բ, 6–ա
4) 1–ա, 2–զ, 3–գ, 4–դ, 5–ե, 6–է

48 **Թվարկվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ.**

ա. Հիմնադրվեց քիմիական արդյունաբերությունը:
բ. Գյումրին դարձավ պղնձարդյունաբերության կենտրոն:
գ. Երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն:
դ. Առաջին երկու հնգամյակների տարիներին կառուցվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
ե. Ղափանը դարձավ ոսկու արդյունահանման կենտրոն:
զ. Բանվորների թիվն աճեց և 1940 թ. կազմեց 500 000:
է. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:

1) բ, ե, զ
2) բ, դ, է
3) ա, դ, է
4) ա, գ, ե

49 **Թվարկվածներից որո՞նք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ.**

ա. Բյուզանդիան հաստատվեց Վիրքում և Պոնտոսում:
բ. Տրդատ III–ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
գ. Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին:
դ. Տրդատ III–ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
ե. Արշակունիները ամրապնդվեցին Հայոց գահին:
զ. Պարսից արքա Շապուհ II–ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
է. Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:

1) ա, բ, է
2) դ, ե, զ
3) ա, գ, զ
4) բ, դ, ե

50 **Քաղաքները դասավորել ըստ դրանց հիմնադրման ժամանակագրական հաջորդականության.**

ա. Տիգրանակերտ
բ. Էրեբունի
գ. Վաղարշապատ
դ. Արշամաշատ
ե. Տուշպա
զ. Մծուրք
է. Երվանդաշատ
ը. Մենուախինիլի
թ. Զարիշատ
ժ. Սամոսատ

1) ը, ե, բ, ժ, է, դ, թ, ա, զ, գ
2) ե, ը, բ, ժ, դ, է, թ, ա, զ, գ
3) ե, բ, ը, ժ, դ, է, ա, թ, զ, գ
4) ե, ը, բ, է, դ, ժ, թ, ա, գ, զ

51 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը.**

ա. Յուսուֆի սպանությունը Տարոնում
բ. Ավանի եկեղեցու կառուցումը
գ. Վարդանակերտի ճակատամարտը
դ. հայ իշխանների հատուկ ժողովը՝ կաթողիկոս Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ
ե. Հովհաննես–Սմբատի մահը
զ. Մանազկերտի ճակատամարտը
է. Դավիթ Անհողինի ապստամբությունը
ը. Աշտիշատի ժողովը
թ. Շահապիվանի ժողովը

1) թ
2) գ
3) ը
4) բ

52 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. ԼՂՀ ինքնապաշտպանական ընդհատակյա կոմիտեի ստեղծումը
բ. ԼՂՀ պետական դրոշի հաստատումը
գ. ԼՂՀ անկախության հռչակագրի ընդունումը
դ. Արցախյան պատերազմի ավարտը, զինադադարի հաստատումը
ե. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստեղծումը
զ. ղարաբաղա–ադրբեջանական պատերազմի սկիզբը
է. «Հարսանիք լեռներում» գործողության սկիզբը
ը. ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը

1) զ, ա, գ, ե, է, բ, ը, դ
2) զ, գ, է, ա, ե, ը, դ, բ
3) գ, զ, ը, է, ե, ա, բ, դ
4) գ, է, զ, ա, ե, բ, ը, դ

53 **Կատարել համապատասխանեցում.**

Նշանավոր կառույցներ կամ արձաններ

1) Մատենադարան
2) «Սասունցի Դավիթ» արձան
3) Երևանի առաջին հէկ
4) «Ալեքսանդր Թամանյան» արձան
5) «Միքայել Նալբանդյան» արձան
6) ՀՀ ԳԱԱ նախագահության շենք

Հեղինակներ

ա. Նիկողայոս Նիկողոսյան
բ. Արտաշես Հովսեփյան
գ. Մարկ Գրիգորյան
դ. Գևորգ Քոչար
ե. Ալեքսանդր Թամանյան
զ. Երվանդ Քոչար
է. Սամվել Սաֆարյան

1) 1–ե, 2–է, 3–բ, 4–դ, 5–ա, 6–գ
2) 1–գ, 2–զ, 3–ե, 4–բ, 5–ա, 6–է
3) 1–գ, 2–ա, 3–ե, 4–է, 5–զ, 6–դ
4) 1–ե, 2–ա, 3–դ, 4–բ, 5–է, 6–զ

54 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Երբ Սմբատ Բագրատունու 2000–անոց այրուձին գտնվում էր Արձնի գյուղի մոտ, արաբական 5000–անոց պատժիչ ջոկատը հասավ նրանց:
բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Արածանին:
գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն, միայն 280 արաբ զինվոր փախչում է ու թաքնվում եկեղեցում:
դ. Արաբների տիրապետության ժամանակ հայ հոգևորականությունը հարկատու չէր:
ե. Վարդանակերտի մոտ պարտված արաբները փախուստի դիմեցին, Երասխի սառույցը ջարդվեց, և նրանցից շատերը խեղդվեցին, միայն 300 հոգու մեծահոգաբար պատսպարել ու բուժել է Կամսարական իշխանուհի Շուշանը:
զ. VIII դ. սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը:
է. Հերթ ոստիկանի աշխարհագրով հարկահանությունը խիստ ծանրացավ:

1) ե, զ, է
2) բ, գ, է
3) ա, ե, զ
4) բ, գ, դ

55 **Հայ կամավորական շարժմանը վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջին:
բ. Ստեղծվեց Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմին՝ Հ. Արղությանի գլխավորությամբ:
գ. Գործադիր կարգադրիչ մարմնի մեջ մտան Հ. Ջավարյանը, Ն. Դումանը, Արմեն Գարոն, Ավ. Ահարոնյանը, Ալ. Խատիսյանը, իսկ 1915 թ.՝ նաև Ռոստոմը:
դ. Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը ԱՄՆ–ի հովանու ներքո:
ե. Կամավորներ էին գալիս Ռուսաստանի ամենատարբեր վայրերից, Բալկաններից և ԱՄՆ–ից:
զ. 1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ:
է. Առաջին ջոկատի հրամանատարն Անդրանիկն էր, իսկ քաղաքական մասի և ռուսական հրամանատարության հետ կապերը վարում էր Ն. Աղբալյանը:
ը. Պահեստային ուժերի հիման վրա կազմակերպվում է V խումբը՝ Վարդանի գլխավորությամբ:
թ. Նորաստեղծ VI ջոկատի դրամական ապահովումն ու կամավորների հավաքագրումն ստանձնեց Արմենական կուսակցությունը:

1) գ, զ, է, ը
2) գ, դ, է, թ
3) ա, բ, ե, է
4) բ, գ, ը, թ

56 **Թվարկվածներից որո՞նք են 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքներ.**

ա. Հայությունը մարտական լուրջ փորձ ձեռք բերեց:
բ. Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնության գաղափարը:
գ. Ամրապնդվեց հայերի և կովկասյան թաթարների ռազմաքաղաքական դաշինքը:
դ. Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:
ե. Հայ հոգևորականության հեղինակությունը աճեց որպես զինված պայքարի կազմակերպիչ:
զ. Սկսեց արծարծվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:
է. Ռուսական մեծապետական շովինիզմն սկսեց տեղի տալ, թուլացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային–գաղութային ճնշումը:

1) ա, բ, է
2) բ, գ, ե
3) ա, դ, զ
4) ա, բ, դ

57 **Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

1) Մատթեոս Ուռհայեցի
2) Ստեփանոս Օրբելյան
3) Վարդան Արևելցի
4) Արիստակես Լաստիվերցի
5) Թովմա Արծրունի
6) Կիրակոս Գանձակեցի

ա. «Հայոց պատմություն»
բ. «Տարեգիրք»
գ. «Պատմութիւն»
դ. «Ժամանակագրություն»
ե. «Պատմութիւն նահանգին Սիսական»
զ. «Արծրունիների տան պատմություն»
է. «Տիեզերական պատմություն»

1) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–զ, 6–բ
2) 1–ե, 2–բ, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
3) 1–դ, 2–ե, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
4) 1–է, 2–ե, 3–դ, 4–զ, 5–ա, 6–բ

58 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հայ մշակույթը մշտապես ազդվել է տարաշխարհիկ մշակույթներից և կորցրել է իր յուրօրինակությունն ու եզակիությունը, ազգային մշակույթին բնորոշ գծերը:
բ. Հայոց առասպելներն ու վիպերգ–ավանդազրույցներն արտացոլել են ժողովրդի աշխարհայացքը, բնության ու հասարակության վերաբերյալ պատկերացումները և արժեքավոր աղբյուր են հայոց հնագույն հավատալիքներն ու դիցարանները հետազոտելու համար:
գ. Հելլենիստական դարաշրջանում հայ մշակույթի երկրորդ՝ հելլենիստական շերտի կրողները գլխավորապես վերին խավերի և քաղաքային ազատ բնակչության ներկայացուցիչներն էին:
դ. Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Նեմրութ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:
ե. Հելլենիստական դարաշրջանի առաջին փուլում Հայաստանում մեծ տարածում է գտնում նաև զրադաշտականությունը, որը դուալիստական կրոն էր և ընդունում էր երկու գերագույն՝ բարի և չար աստվածների նախասկիզբ և համազոր գոյությունը:
զ. Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հասարակ ժողովրդի մեջ, հայոց արքունիքում և ավագանու շրջանում և ամբողջությամբ վերափոխեցին մեր ազգային մշակույթը:
է. Քրիստոնեության պետականացումից հետո Հայաստանում արգելվել է հայկական մեհենագրության գործածությունը, և արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա նաև ասորերենն ու պահլավերենը:

1) ա, գ, ե
2) բ, զ, ե
3) բ, գ, է
4) դ, զ, է

59 **Պնդումներից որո՞նք չեն բնորոշում կրոնի և եկեղեցու նկատմամբ խորհրդային պետության վարած քաղաքականությունը.**

ա. Խիստ սահմանափակվեցին կրոնական քարոզչության հնարավորությունները, և ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ:
բ. Եկեղեցուն չտրվեց գործունեության լայն ազատություն, և ուժեղ պայքար ծավալվեց նրա դեմ:
գ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իշխանության կողմից եկեղեցու շարժական և անշարժ գույքը թողնվեց նրա տնօրինությանը:
դ. Ռուսաստանի սովյալ բնակչությանն օգնելու պատրվակով սկսվեց եկեղեցական գույքի և թանկարժեք իրերի բռնագրավումը:
ե. 1926 թ. հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի օրվա՝ ապրիլի 24–ի նշումը:
զ. Շարունակվեց ճեմարանի և հոգևոր դպրոցի գործունեությունը:
է. Պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում իշխանությունները փորձեցին օգտագործել «Ազատ եկեղեցական եղբայրությունը» կամ «Նոր եկեղեցին»:
ը. Սկսած 1920–ական թվականներից՝ պետությունը փակում է վանքերը, եկեղեցիները, դրանք ծառայեցնում որպես պահեստներ:
թ. ԽՍՀՄ իշխանությունների կարգադրությամբ փակված կամ ավերված մի շարք եկեղեցիներ 1930–ական թվականներին վերականգնվեցին և սկսեցին գործել:

1) ա, զ, թ
2) բ, գ, ե
3) դ, է, ը
4) գ, զ, թ

60 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին.**

1) հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումների արգելումը
2) գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
3) մանր և միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը
4) դրամական աշխատավարձի կիրառումից հրաժարումը
5) քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը
6) պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կիրառումը
7) ազատ առևտրի վերականգնումը
8) հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը

61 **Թվարկվածներից որո՞նք են IX–XI դարերում Հայաստանում քաղաքների առաջացման պատճառ հանդիսացել.**

1) Երկրում զարգանում էին արհեստներն ու ներքին առևտուրը:
2) Արաբների և բյուզանդացիների միջև պատերազմներն ընթանում էին Հայաստանի տարածքում, և պատերազմական ավարը նպաստում էր քաղաքների վերելքին:
3) Զարգանում էր միջազգային առևտուրը:
4) Հայաստանում երկրագործությունը խոր անկման վիճակում էր գտնվում, ուստի հայոց արքաները նոր քաղաքներ հիմնադրելու և տնտեսությունը զարգացնելու քաղաքականություն էին վարում:
5) Խորացել էր աշխատանքի հասարակական բաժանումը, արհեստագործությունն անջատվել էր երկրագործությունից:
6) Հայաստանը խզել էր տնտեսական կապերը Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի հետ ու ձգտում էր զարկ տալու տեղական քաղաքներում արհեստագործությանն ու ներքին առևտրին:
7) Արհեստավորներին ու առևտրականներին ստիպում էին բնակվել քաղաքներում:

62 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում ռուսական զորքերը մնացին Արևմտյան Հայաստանում:
2) Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանում ձևավորվեց իշխանության գործադիր նոր մարմին՝ Ժողկոմխորհը:
3) Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանը միացավ Անտանտին:
4) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանության եկան բոլշևիկները:
5) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատը:
6) Փետրվարյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանում միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության:
7) Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում ամբողջովին փոխվեց Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը:

63 **Ընտրել ճիշտ փաստարկները.**

1) Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Արարատից:
2) Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը Սիփանն է, որը գտնվում է Վանա լճից հյուսիս և ունի 4096 մ բարձրություն:
3) Կապուտան կամ Ուրմիա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1916 մետր:
4) Գառնիի ավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել 1679 թ.:
5) Ակոռիի ավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել 1926 թ.:
6) ՀՀ–ի՝ բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3925 մ բարձրություն:
7) Վանա լիճը ծովի մակերևույթից ունի 1720 մ բարձրություն և չորս կղզի, որոնցից ամենանշանավորն Աղթամարն է:
8) Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Մասիսն է (Արարատ), որն ունի 5165 մ բարձրություն:

64 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Մեսրոպ Մաշտոցին էր վերապահված հայոց ինքնության հզոր դրսևորումներից մեկի՝ գրերի գյուտի առաքելությունը:
2) Մաշտոցը քարոզչական գործունեության նպատակով գնում է Նախիջևան գավառից հյուսիս՝ Գողթան գավառը:
3) Մեսրոպ Մաշտոցը հայերեն բանավոր թարգմանում է Պլատոնի աշխատությունը:
4) Հայաստանի արևմտյան մասում հունարենը պարսից արքունիքը դիտում էր որպես թշնամի երկրի՝ Հռոմեական կայսրության լեզու, և Հայաստանում զավթողական քաղաքականության իրականացման ժամանակ նույնիսկ արգելվում էր դրա կիրառումը՝ փոխարենը պարտադրելով ասորերենը:
5) IV դարի վերջում մայրենի լեզվով գիր ու գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու համար:
6) Մատենագրական տեղեկությունների համաձայն՝ II–III դարերում հայերը հիշատակված են հին դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:
7) Մեսրոպ Մաշտոցն արքունիքի միջազգային գրագրություններում կիրառում էր հունարենի, պահլավերենի, էլամերենի իր իմացությունը:

65

Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Կ. Պոլսի ռուս–թուրքական պայմանագրի կնքումը
2) Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը
3) Անգեղակոթի ժողովի գումարումը
4) Իսրայել Օրու ուղևորությունը Պարսկաստան
5) Խամսայի մելիքությունների ինքնավարության ստեղծումը
6) Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը
7) Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքումը
8) Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
9) Հայոց եկեղեցու կանոնադրության հրապարակումը

66

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
2) Հովհաննես Ադամյանի կողմից Երևանում առաջին անգամ եռագույն հեռուստատեսության ցուցադրումը
3) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
4) խորհրդահայ ճարտարապետների միության ստեղծումը
5) Էջմիածնում մշակութային–պատմական ինստիտուտի հիմնումը
6) Լոզանի կոնֆերանսի ավարտը

67

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) հայ–մոնղոլական դաշինքի կնքումը
2) Անիի վերջնական ազատագրումը հայ–վրացական ուժերի կողմից
3) Այուբյան սուլթանի կողմից Երուսաղեմի գրավումը
4) Ամբերդի ազատագրումը հայ–վրացական ուժերի կողմից
5) Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնումը
6) Դիոգենես կայսեր գերեվարումը

68 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Հյուսիսային Միջագետքի փոխարքա նշանակված Տիգրան Մեծի եղբայրը
բ. Տիգրան Մեծի հետ Արտաշատում պայմանագիր կնքած հռոմեացի զորավարը
գ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհին
դ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը
ե. Տիգրան Մեծի հետ դաշինք կնքած Պոնտոսի արքան
զ. Անտիոքի փոխարքա–կառավարիչ նշանակված Տիգրան Մեծի զինակիցը

1) Կլեոպատրա
2) Պոմպեոս
3) Սելենե
4) Գուրաս
5) Միհրդատ
6) Բագարատ
7) Միհրդատ VI Եվպատոր

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Արթուր Մկրտչյան
բ. Գագիկ Հարությունյան
գ. Անդրանիկ Մարգարյան
դ. Ռաֆֆի Հովհաննիսյան
ե. Կարեն Դեմիրճյան
զ. Օլեգ Եսայան

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

1) ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ
2) ԼՂՀ վարչապետ
3) Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ
4) ՀՀ առաջին արտգործնախարար
5) ՀՀ Ազգային ժողովի նախագահ
6) ԼՂՀ նախագահ
7) ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) «Դրոշակ» թռուցիկ թերթի առաջին համարում հրապարակած հռչակագրով դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրությունն ազդարարել է իր գլխավոր խնդիրը:
2) Ժողովրդավարական սկզբունքի համաձայն՝ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամները գիտեին իրենց ղեկավարներին և անդամների մեծ մասին:
3) Ժնևի համալսարանի մի խումբ արևելահայ ուսանողներ, հետևելով ռուս հեղափոխական Գ. Պլեխանովի «Կոլոկոլ» թերթի օրինակին, իրենց պաշտոնաթերթը կոչել են « Հնչակ»:
4) Արևելյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է «Հայրենասերների միությունը»:
5) Արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող կանոնադրությունը հայտնի է նաև «Ազգային սահմանադրություն» անվամբ:
6) «Ազատության ավետաբեր» թերթը գաղտնի կերպով տպագրել է «Միություն ի փրկություն» խմբակը: